ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԵՏԱԿԱՆ ՖՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԿԱՑՈՒԹՅԱՄԲ ՍՏԱՑՎԱԾ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

հ/հ	Առարկության, առաջարկության հեղինակը, Գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
1.	2.	3.	4.	5.
1.	ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ № /27.3/49976-2024 «9» դեկտեմբերի 2024թ.	1. «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) նախաբանում «օրենքի» բառից առաջ կիրառվող «Հայաստանի Հանրապետության» բառերն անհրաժեշտ է հանել՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածը: 2. Նախագծի 2-ից 7-րդ կետերն առաջարկում ենք հանել՝ նկատի ունենալով, որ հիշյալ կետերում նշված հատվածները հանդիսանում են Նախագծի 1-ին կետով հաստատվող հավելվածի մասեր, ուստի դրանք առանձին հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է: Բացի այդ, Նախագծի հավելվածի գլխագրում անհրաժեշտ է լրացնել հավելվածի վավերապայմանները: 3. Նախագծի Հավելվածին կից «Լրացման ցուցումներ»-ն անհրաժեշտ է հանել, քանի որ Նախագիծը վերաբերում է Սյունիքի մարզի Սիսիան համայնքի 2025 թվականի բյուջեի հաստատմանը և պարզ չէ Նախագծի Հավելվածին կից «Լրացման ցուցումներ»-ի նախատեսումը:	-	Համապատասխան փոփոխությունները կատարված են: Հիմնավորման լրամշակված տարբերակը կներկայացվի ավագանու նիստում: